



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՈՐՈՇՈՒՄ**

-- սեպտեմբերի 2021 թվականի N°---Ա
ք. Երևան

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱՎԱՆ ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

1) Երևանի քաղաքապետարանը (այսուհետ՝ Քաղաքապետարան) 2021 թվականի մայիսի 4-ին վարչական բողոք է ներկայացրել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով վերացնել Հանձնաժողովի 2021 թվականի ապրիլի 28-ի N°140Ա որոշումը (այսուհետ՝ Որոշում), որի կայացման ընթացքում, իր գնահատմամբ, թույլ են տրվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 21-րդ, 25-րդ, 26-րդ և 37-րդ հոդվածների խախտումներ: Որպես բողոքի հիմնավորում Քաղաքապետարանը հայտնել է հետևյալը.

ա. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) 2021 թվականի փետրվարի 16-ին դիմել է Հանձնաժողով՝ շտապ բժշկական օգնության ծառայության զանգերի ընդունման «103» կարճ կոդի տնօրինման իրավունքը և դրանից բխող պարտավորությունները փոխանցելու Նախարարությանը և, Հանձնաժողովը Որոշմամբ, առանց որևէ իրավական հիմնավորման, հիմնվելով միայն Նախարարության եզրահանգումների վրա ու չունենալով այդ եզրահանգումները հիմնավորող որևէ ապացույց, վերլուծություն, վիճակագրություն, բավարարել է Նախարարության դիմումը: Ավելին՝ Հանձնաժողովը, տեղեկացված լինելով, որ Նախարարությունը չունի որևէ տեխնիկական միջոց և հնարավորություն նշված համարի աշխատանքը կազմակերպելու համար, կայացրել է Որոշումը՝ առանց հաշվի առնելու հետևանքները: Փաստացի, ներկա պահին Որոշման կատարման և համարի շահագործումը Նախարարությանը փոխանցելու դեպքում այն պարզապես չի աշխատի, քանի որ Նախարարությունը չունի համապատասխան զանգերի ընդունման կենտրոն, անհրաժեշտ աշխատակիցներ, առկա չեն նշված համարի շահագործման համար անհրաժեշտ այլ պայմաններ և փորձ.

բ. Քաղաքապետարանի լիազորված ներկայացուցչի կողմից Հանձնաժողովը տեղեկացվել է, որ «Շտապբուժօգնություն» փակ բաժնետիրական ընկերությունն (այսուհետ՝ Ընկերություն) առանձին իրավաբանական անձ է, գործում է ինքնուրույն և պետք է հանդես գա որպես վարչական վարույթի ինքնուրույն սուբյեկտ՝ անկախ այն հանգամանքից, որ ընկերության հիմնադիրը Երևան համայնքն է: «1-03» կարճ հեռախոսահամարի իրավատերը և օրինական շահագործողը ներկայումս Ընկերությունն է, որը նաև «Տելեկոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության հետ կնքված պայմանագրի կողմ է, և նշված շահագործման իրավունքի հնարավոր դադարեցումը ուղղակիորեն առնչվելու է Ընկերության իրավունքներին: Ըստ այդմ, եզրահանգել է, որ Ընկերության իրավունքներն ու օրինական շահերն ակնհայտորեն շոշափվելու էին վարչական վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտով, ուստի անհրաժեշտ էր Ընկերությանը վարույթին ներգրավել որպես երրորդ անձ: Ըստ Քաղաքապետարանի՝ վերը նշված հանգամանքների իրավացիությունը ընդունվել է Հանձնաժողովի կողմից, և Որոշմամբ դրանք կասկածի տակ չեն դրվել ավելին՝ Հանձնաժողովն ինքն է փաստել, որ ցանկացել է Ընկերությանը ներգրավել անցկացվող վարույթին, սակայն չի ներգրավել, քանի որ Ընկերությունն իր 2021 թվականի փետրվարի 26-ի №131 գրությամբ հայտնել է, որ Հանձնաժողովի գրությունը պետք է հասցեագրել Քաղաքապետարան: Ըստ բողոքաբերի՝ տվյալ դեպքում պարզ չէ, թե Հանձնաժողովն ինչի հիման վրա է կատարել եզրահանգում, որ Ընկերությունը հրաժարվել է մասնակցել վարչական վարույթին, եթե Ընկերությունը չի հայտնել, որ վարչական վարույթին չի ցանկանում ներգրավվել: Ընկերությանը ներկայացվել է Հանձնաժողովի որոշման նախագիծ և առաջարկվել է նշված նախագծի վերաբերյալ հայտնել դիրքորոշում, և որևէ խոսք վարչական վարույթի հարուցման և վարչարարության իրականացման վերաբերյալ չի եղել: Պնդել է նաև, որ, Օրենքի կարգավորումների համաձայն, վարչական վարույթի մասնակցի կողմից դիրքորոշում հայտնելուց հրաժարվելը հիմք չէ նրան վարչական վարույթի մասնակցի չդարձնելու համար: Ուստի եթե նույնիսկ Ընկերությունը հրաժարվել է նախագծի վերաբերյալ դիրքորոշում հայտնել, վարչական մարմինն անգամ այդ դեպքում իրավունք չունի որևէ սուբյեկտի վարչական վարույթի մասնակցի չդարձնել: Համեմատության համար վկայակոչվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 38-րդ հոդվածի 3-րդ մասը՝ ընդգծելով, որ Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով ամրագրված պահանջը իմպերատիվ է և կապված չէ կողմի ցանկության հետ, ուստի ցանկացած անձ, ում իրավունքը կարող է շոշափվել վարչական ակտով, պետք է ներգրավվի վարչական վարույթում որպես երրորդ անձ, այլ ոչ թե պետք է հաշվի առնել նրա դիրքորոշում հայտնելու

ցանկությունը: Նշվել է նաև, որ Ընկերությանը վարչական վարույթին մասնակից չդարձնելով, նրա կողմից դիրքորոշում, ապացույցներ և գործի ելքի համար էական նշանակություն ունեցող հանգամանքներ ներկայացնելու իրավունքը սահմանափակելով՝ Հանձնաժողովը սահմանափակել է նաև Քաղաքապետարանի իրավունքը, քանի որ Քաղաքապետարանի դիրքորոշումը չի կարող մյուս մարմինների դիրքորոշումների նման հիմնվել ենթադրությունների վրա և պետք է ձևավորվեր և ներկայացվեր Ընկերության կողմից ներկայացված փաստական տվյալները հաշվի առնելով և դրանց հիման վրա.

- գ. Քաղաքապետարանի դիտարկմամբ, սխալ է մեկնաբանել նաև Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը՝ նշելով, որ տվյալ դեպքում Հանձնաժողովն ի սկզբանե քննության առարկա է դարձրել միայն Նախարարության 2021 թվականի փետրվարի 16-ի դիմումի բավարարման վերաբերյալ նախագիծը, այսինքն՝ ի սկզբանե քննարկման առարկա է եղել միայն նշված դիմումը բավարարելու հարցը, և Հանձնաժողովի կողմից չի քննարկվել դրա մերժման հնարավորությունը, քանի որ դիմումը մերժելու մասին նախագիծ կազմված չէ: Ուստի, Քաղաքապետարանի համոզմամբ, Հանձնաժողովն ի սկզբանե դիրքորոշում է ունեցել գործի հնարավոր ելքի մասին, քանի որ այլ նախագիծ՝ Նախարարության դիմումը մերժելու, վարույթը կարճելու կամ կասեցնելու և այլնի մասին անգամ չի քննարկվել: Հանձնաժողովի 2017 թվականի նոյեմբերի 11-ի N°462Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի վերաբերյալ նշել է, որ այն չի սահմանում, որ պետք է կազմվի միայն մեկ նախագիծ, այսինքն՝ Հանձնաժողովին չի ստիպում ի սկզբանե ունենալ կանխակալ մոտեցում, իսկ եթե նույնիսկ նախատեսում է միայն մեկ նախագծի քննարկման հնարավորություն, ապա ստացվում է, որ հակասում է Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետին, ուստի չի կարող կիրառվել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ուժով: Նշել է նաև, որ որոշման նախագիծը Քաղաքապետարան ներկայացվել (հրապարակայնացվել) է հենց Հանձնաժողովի նախագահի՝ Երևանի քաղաքապետին ուղղված 2021 թվականի ապրիլի 21-ի N°ԳԲ/34.2-Մ2-10/1286-2021 գրությամբ, այսինքն՝ առնվազն Հանձնաժողովի նախագահի կողմից Երևանի քաղաքապետին քննարկվող գործի հնարավոր ելքի մասին ներկայացվել է դիրքորոշում, ինչից էլ եզրահանգել է, որ Հանձնաժողովի նախագահը պարտավոր էր անհապաղ ինքնաբացարկ հայտնել Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի հիման վրա, իսկ Քաղաքապետարանի ներկայացուցչի հարցումն ուղղված է եղել Հանձնաժողովի մյուս անդամների մասնակցությունը պարզելուն.

դ. Քաղաքապետարանը խնդրել էր նաև սույն թվականի ապրիլի 28-ին նշանակված նիստում «1-03» կարճ հեռախոսահամարի տնօրինման հարցի քննարկումը հետաձգել՝ հնարավորություն տալով Երևան համայնքին, անհրաժեշտության դեպքում, ներկայացնել բացարկի միջնորդություն, ինչպես նաև հաշվի առնելով, որ վերջնական դիրքորոշման ձևավորման համար Քաղաքապետարանին անհրաժեշտ է ծանոթանալ Ընկերության ներկայացրած դիրքորոշմանը և ապացույցներին: Նշվել է նաև, որ նույնիսկ այն հանգամանքը, որ Ընկերությունը որպես երրորդ անձ չէր ներգրավվում, չէր կարող նշանակել, որ նրա տիրապետման տակ առկա չեն ապացույցներ և փաստական տվյալներ, որոնք հարցի քննարկման համար չունեն էական նշանակություն՝ ավելացնելով, որ նման տվյալներ (զանգերի քանակ, վիճակագրություն և այլն) ունի միայն Ընկերությունը, այլ ոչ թե Նախարարությունը կամ Հանձնաժողովը: Ուստի վարչական մարմինը պարտավոր էր դրանց ծանոթանալ՝ գործի բազմակողմանիությունն ապահովելու համար: Վկայակոչելով Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը՝ նշվել է, որ տվյալ դեպքում փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը հնարավոր էր ապահովել միայն Ընկերությունից անհրաժեշտ տվյալներ ստանալով, որը Հանձնաժողովը չի ապահովել, իսկ Քաղաքապետարանին զրկել է այդ տվյալներն ստանալու և վարչական մարմնին ներկայացնելու հնարավորությունից, քանի որ չի հետաձգել հարցի քննարկումը՝ տեղեկացված լինելով հետաձգման նպատակի մասին,

2) սույն թվականի մայիսի 5-ից հարուցվել է Որոշման բողոքարկման վարույթ, որի վերաբերյալ Քաղաքապետարանը ծանուցվել է Հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 5-ի №ԳԲ/34.2-Մ2-10/1455-2021 գրությամբ,

3) Հանձնաժողովը, ուսումնասիրելով Քաղաքապետարանի ներկայացրած բողոքը և դրա հիմնավորումները, հաստատված է համարում, որ՝

ա. Որոշման իրավաչափությունը բխում է հետևյալ իրավանորմերից.

- Հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 28-ի «ԱրմենՏել» («Տելեկոմ Արմենիա») փակ բաժնետիրական ընկերությանը համարների զբաղեցման թույլտվություն տրամադրելու մասին» №683Ա որոշմամբ հաստատված №1 հավելվածի №4 աղյուսակի 4-րդ կետի համաձայն՝ «103» կարճ կոդը նախատեսված է շտապ բժշկական օգնության ծառայության թեժ գծի օգտագործման համար,
- Հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 13-ի «Հատուկ ծառայությունների կամ ծառայության կոդերի զբաղեցման կանոնները սահմանելու մասին» №210Ն որոշմամբ սահմանված կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 2-րդ և 7-րդ կետերի համաձայն՝ «1xx» հատուկ ծառայությունների կոդը կարող է օգտագործվել

բացառապես արտակարգ իրավիճակներում կամ մարդու կյանքի, առողջության, գույքի կամ ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքների պաշտպանություն ապահովող իրավասու մարմինների կողմից՝ նշված իրավիճակներում օպերատիվ արձագանքման գործառույթներ իրականացնելու համար, ինչպես նաև պետական կամ հանրային նշանակության կառույցների կողմից՝ հանրությանը մատուցվող տեղեկատվական բնույթի ծառայությունների տրամադրման համար և մինչև կանոններն ուժի մեջ մտնելու պահը գործարկված կոդերը շարունակում են գործարկվել նույն պայմաններով՝ մինչև Հանձնաժողովի կողմից այլ պայմաններ սահմանելը,

- «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 2-րդ կետի համաձայն՝ առողջապահության, բժշկական օգնության որակի և արդյունավետության բարձրացման, առողջապահական համակարգի արդյունավետ գործունեության նպատակով առողջապահական կազմակերպություններին կազմակերպամեթոդական օգնության ապահովման, առողջապահության համակարգի արդյունավետ գործունեության, կազմակերպման, կառավարման և տնտեսավարման ժամանակակից մեխանիզմների ներդրման, մարդու և հանրության առողջության պահպանման, բնակչության առողջության բարելավման, արտակարգ իրավիճակներում բնակչության բժշկական օգնության ապահովման..., ոլորտներում Կառավարության քաղաքականությունը մշակում և իրականացնում է Նախարարությունը,

բ. Որոշումն ընդունվել է գործող իրավակարգավորումների պահանջներին (այդ թվում՝ պատճառաբանվածության և հիմնավորվածության մասին) համապատասխան, և այն անվավեր ճանաչելու հիմքերը բացակայում են: Մասնավորապես, Կանոնների իմաստով «103» կարճ կողը ենթակա է օգտագործման Նախարարության կողմից, քանի որ՝

- շտապ բժշկական օգնության ծառայության թեժ գծի «103» կարճ կողն ունի համապետական նշանակություն, և նշված կողին կատարվող զանգերի սպասարկման շրջանակում շտապ բժշկական օգնության ծառայությունների մատուցումն իրականացվում է ամբողջ հանրապետության տարածքով, իսկ առողջապահական ծառայությունների տեսանկյունից այն դիտարկվում է շտապ բժշկական օգնության արտահիվանդանոցային ծառայության հետ կապի միջոց,
- շտապ օգնության ծառայության գործակարգավարական բաժինը համարվում է բժշկական ստորաբաժանում, իսկ շտապ և անհետաձգելի օգնության ծառայությունը «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի իմաստով առողջապահության ոլորտում մասնագիտական գործունեություն է,

- առողջապահության ոլորտի իրավասու մարմինը Նախարարությունն է,
- գ. Քաղաքապետարանը չի հիմնավորել Որոշմամբ որևէ իրավակարգավորման խախտման հանգամանքը, իսկ բողոքում նշված պնդումներն անհիմն են՝ հետևյալ պատճառաբանությամբ.
- հաշվի առնելով, որ Կանոնների 2-րդ կետի համաձայն՝ «103» հատուկ ծառայությունների կողմ կարող է օգտագործվել բացառապես արտակարգ իրավիճակներում կամ մարդու կյանքի, առողջության, գույքի կամ ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքների պաշտպանություն ապահովող իրավասու մարմինների կողմից, Որոշման կայացմանն ուղղված վարչարարության ընթացքում խնդիրը եղել է բացառապես համապատասխան իրավասու մարմնի պարզումը (որը՝ շարադրված իրավանորմերի համաձայն, Նախարարությունն է): Անդրադառնալով Քաղաքապետարանի պնդումներին, թե իբրև Հանձնաժողովը՝ տեղեկացված լինելով, որ Նախարարությունը չունի որևէ տեխնիկական միջոց և որևէ հնարավորություն նշված համարի աշխատանքը կազմակերպելու համար, կայացրել է Որոշումը՝ առանց հաշվի առնելու դրա հետևանքները, ապա հարկ է նկատել, որ հարցի գնահատումը, թե արդյոք ոլորտի իրավասու մարմինն ունի իր կողմից շահագործման ենթակա համապատասխան կողմի աշխատանքները պատշաճ կազմակերպելու տեխնիկական հնարավորություններ, թե ոչ, դուրս է Հանձնաժողովի իրավասությունների շրջանակից, ուստի և որևէ կերպ վերջինիս կողմից վարույթի շրջանակում քննարկվել կամ գնահատվել չէր կարող: Նշվածի համատեքստում անհասկանալի է Քաղաքապետարանի պնդումը՝ այդ մասին Հանձնաժողովի տեղեկացված լինելու վերաբերյալ, քանզի չնայած վարույթի առարկայի հետ այդ հարցի առնչության բացակայությանը՝ Քաղաքապետարանն իր հիշյալ պնդումը հիմնավորող որևէ ապացույց չի ներկայացրել: Պետք է նշել, որ Հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 28-ի «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերությանը համարների զբաղեցման թույլտվություն տրամադրելու մասին» N°683Ա որոշման համաձայն՝ «103» կարճ կողմ նախատեսված է շտապ բժշկական օգնության ծառայության թեժ գծի օգտագործման համար, այլ ոչ թե հատուկ Ընկերության կողմից օգտագործելու նպատակով, նկատի ունենալով նշված կողմի օգտագործման և շտապ բժշկական օգնության ծառայության մատուցման համապետական նշանակությունը: Ուստի, Քաղաքապետարանի դիրքորոշումն առ այն, որ «103» կարճ կողմ պետք է շարունակի օգտագործվել Ընկերության կողմից, տարակուսելի է նաև այն տեսանկյունից, որ «103» կարճ կողմն ունի համապետական նշանակություն, մինչդեռ Ընկերությունը շտապ օգնության ծառայությունն իրականացնում է Երևան քաղաքում:

- Օրենքի 21-րդ հոդվածի ենթադրյալ խախտման մասին Քաղաքապետարանի պնդման առնչությամբ հարկ է նշել, որ երրորդ անձին վարչական վարույթի մասնակից դարձնելու հարցում վարչական մարմնի պարտականությունը սահմանափակվում է հարուցված վարչական վարույթի մասին վերջինիս իրազեկման գործողության կատարմամբ՝ լավաճ լինելու և վարչական վարույթի մասնակցի համար նախատեսված այլ հիմնարար իրավունքների երաշխավորման նպատակով, և որևէ կերպ չի ենթադրում երրորդ անձի՝ վարչական վարույթին հակառակ իր կամքի պարտադիր մասնակցության ապահովում: Այսինքն, օրենսդրի կողմից երրորդ անձանց վարչական վարույթում ներգրավելու իրավական հնարավորություն նախատեսելու հիմնական նպատակը երրորդ անձանց սուբյեկտիվ իրավունքների և ազատությունների գործնականում արդյունավետ պաշտպանություն ապահովելն է, ինչն էլ իրականացվում է քննարկվող հարցի վերաբերյալ վերջիններիս ծանուցելու և լավաճ լինելու հնարավորություն ընձեռելու միջոցով: Ընդ որում, նշված մոտեցումը համահունչ է նաև N°ՎԴ/12466/05/13 գործով Վճռաբեկ դատարանի 2016 թվականի հուլիսի 22-ի որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշմանը:

Տվյալ դեպքում Հանձնաժողովը դեռևս 2021 թվականի փետրվարի 22-ին N°ԳԲ/34.2-Մ2-10/534-2021 գրությամբ Ընկերությանը տեղեկացրել է հարցի քննարկման մասին, մինչդեռ վերջինս 2021 թվականի փետրվարի 26-ի N°131 գրությամբ (պատճենը տրամադրվել է Քաղաքապետարանին Հանձնաժողովի 2021 թվականի մարտի 10-ի N°ԳԲ/34.2-Մ2-10/676-2021 և ապրիլի 21-ի N°ԳԲ/34.2-Մ2-10/1286-2021 գրություններով) հայտնել է, որ Ընկերության հիմնադիրը և բաժնետոմսերի (100 տոկոս) սեփականատերը Քաղաքապետարանն է, և գրությունը պետք է վերահասցեագրել Երևանի քաղաքապետի անունով, ինչը Հանձնաժողովի կողմից ապահովվել է: Այսպիսով, Հանձնաժողովը փաստում է, որ Ընկերությունը պատշաճ կարգով իրազեկված է եղել վարույթի առարկայի մասին և ունեցել է լիարժեք հնարավորություն ու ավելի քան բավարար ժամանակ իր իրավունքները պաշտպանելու, լսումներին մասնակցելու համար, սակայն իր իսկ կամքով դրանք չի իրացրել՝ այդ մասին տեղեկացնելով Հանձնաժողովին: Նշվածից առավել քան ակնհայտ է, որ Որոշման կայացմանն ուղղված վարչարարության ընթացքում Հանձնաժողովի կողմից Օրենքի 21-րդ հոդվածի խախտման մասին խոսք անգամ լինել չի կարող, իսկ այդ առնչությամբ Քաղաքապետարանի պնդումներն անհիմն են և գործող իրավակարգավորումների հետ անհամատեղելի:

Այս առնչությամբ Քաղաքապետարանի պնդումները նաև հակասական են, մասնավորապես, մի դեպքում վերջինս հայտնել է (2021 թվականի մարտի 22-ի

№01/10-29209 գրությամբ), որ Երևանի քաղաքապետը կառավարում է Երևանի սեփականություն համարվող առողջապահական կազմակերպությունները և տվյալ դեպքում՝ Ընկերության գործունեությունը համակարգվում է Երևանի քաղաքապետի կողմից, ու վերջինս պատասխանատվություն է կրում նշված ոլորտում այդ լիազորությունների իրականացման համար, մեկ այլ դեպքում էլ պնդել է, որ Ընկերությունը Քաղաքապետարանի ստորաբաժանում չէ, գործում է ինքնուրույն և պետք է հանդես գար որպես վարչական վարույթի ինքնուրույն սուբյեկտ: Ընդ որում, Քաղաքապետարանի վերջին դիտարկման համատեքստում վիճահարույց է դառնում քննարկվող վարույթին վերջինիս մասնակցության և Որոշման վիճարկման իրավասության հարցը:

- Օրենքի 25-րդ հոդվածը վերաբերում է վարույթի մասնակիցների կողմից վարույթն իրականացնող պաշտոնատար անձին (կոլեգիալ կազմի անդամին) բացարկ հայտնելու հիմքերին և կարգին (այդ թվում՝ դրա քննարկման): Մինչդեռ տվյալ դեպքում վարույթի որևէ մասնակցի կողմից Հանձնաժողովի որևէ անդամի բացարկ չի հայտնվել, հետևաբար Հանձնաժողովի կողմից քննարկման կարգ խախտվել չէր կարող, ինչի համատեքստում էլ անհիմն են Քաղաքապետարանի պնդումներն ու եզրահանգումները Հանձնաժողովի կողմից հիշյալ կարգավորման խախտման առնչությամբ: Ավելին, Քաղաքապետարանը զրկված չի եղել բացարկ հայտնելու հնարավորությունից, և եթե, իրոք, իր համոզմամբ, առկա են եղել Հանձնաժողովի նախագահին բացարկ հայտնելու հիմքեր, ապա դեռևս 2021 թվականի մարտի 10-ից, երբ Հանձնաժողովի նախագահի նույն ամսաթվի №ԳԲ/34.2-Մ2-10/676-2021 գրությամբ տեղեկացվել է նախագծի մասին, բավականաչափ ժամանակ է ունեցել Օրենքին համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար, ինչը, սակայն, չի արվել: Ավելին, հարցի քննարկումը անգամ Քաղաքապետարանի դիմումի հիման վրա հետաձգվել է: Այդ ժամանակահատվածում ևս Քաղաքապետարանը ոչինչ չի ձեռնարկել:

Օրենքի 26-րդ հոդվածի խախտման վերաբերյալ Քաղաքապետարանի պնդման առնչությամբ հարկ է նկատել, որ տվյալ պարագայում բացակայել են Հանձնաժողովի որևէ անդամի, այդ թվում՝ նախագահի ինքնաբացարկ հայտնելու հիմքերը, ուստի նշված իրավակարգավորման խախտման մասին ևս խոսք լինել չի կարող: Իսկ Հանձնաժողովի նախագահի կողմից համապատասխան նախագիծը Քաղաքապետարան ներկայացնելը բխել է գործող իրավակարգավորումներից, այդ թվում՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 7.1 հոդվածի 1-ին մասից, ինչպես նաև Հանձնաժողովի 2017 թվականի նոյեմբերի 1-ի №462-Ն որոշմամբ հաստատված՝ նիստերի հրավիրելու և անցկացնելու կարգի 13-րդ,

24-րդ ու 25-րդ կետերից, որոնք, որպես ընթացակարգային նորմեր, նախատեսում են Հանձնաժողովի կողմից հարցերի քննարկման կարգը: Ըստ այդմ, Քաղաքապետարանը նշված գրությամբ, ելնելով Հանձնաժողովի կողմից թափանցիկության ապահովման սկզբունքից, ինչպես նաև իրականացվող լուսմաներին Քաղաքապետարանին առավել լիարժեք մասնակից դարձնելու հնարավորություն ընձեռելու նպատակով, ընդամենը տեղեկացվել է վարչական վարույթի ընթացքի ու բովանդակության մասին, և նշված նախագիծը հարկ է մեկնաբանել հենց այդ համատեքստում, այլ ոչ թե որպես նախապես որոշված ելքի առկայությունը հիմնավորող փաստաթուղթ: Ընդ որում, կարևոր է ընդգծել, որ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 11-րդ հոդվածին համապատասխան, Հանձնաժողովի որոշումները կարող են ընդունվել բացառապես Հանձնաժողովի անդամների քվեարկությամբ, հետևաբար Հանձնաժողովի որևէ կառուցվածքային ստորաբաժանման կողմից մշակված նախագիծը չի կարող դիտարկվել որպես արդեն իսկ ընդունված որոշում, և ավելին՝ որոշումների ընդունմանը Հանձնաժողովի նախագահը մասնակցում է քվեարկող ընդամենը մեկ ձայնի իրավունքով:

Շարադրված հիմնավորումներով բացառելով ինքնաբացարկի հիմքերի առկայության հանգամանքը՝ հարկ է նաև նշել, որ անգամ եթե Հանձնաժողովի նախագահի պարագայում այդպիսին լիներ, ապա նրա կողմից նման պայմաններում Որոշման կայացմանը մասնակցությունը որևէ ազդեցություն չէր կարող ունենալ քվեարկության ելքի վրա, քանզի Որոշումն ընդունվել է Հանձնաժողովի չորս անդամների (այդ թվում՝ նախագահի) կողմից միաձայն կողմ քվեարկելով, և անգամ եթե նախագահը չմասնակցեր քվեարկությանը, միևնույնն է Որոշումը կընդունվեր Հանձնաժողովի երեք անդամների՝ հարցին կողմ քվեարկությամբ:

Ինչ վերաբերում է Հանձնաժողովի նիստեր հրավիրելու և անցկացնելու կարգի դրույթների առնչությամբ Քաղաքապետարանի մեկնաբանություններին, ապա դրանք սխալ են և ակնհայտորեն չեն բխում հիշյալ կարգավորման տրամաբանությունից:

- Իրականացված վարչական վարույթի ընթացքում բացահայտվել են կիրառելի իրավական նորմերում առկա բոլոր փաստակազմերը, ինչը բավարար է եղել գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումն ապահովելու՝ Օրենքի 37-րդ հոդվածով նախատեսված պահանջի պահպանման համար:

Ինչպես արդեն նշվել է, հաշվի առնելով Կանոնների 2-րդ կետն առ այն, որ «103» հատուկ ծառայությունների կողմը կարող է օգտագործվել բացառապես արտակարգ իրավիճակներում կամ մարդու կյանքի, առողջության, գույքի կամ ազգային

անվտանգության դեմ ուղղված սպառնալիքների պաշտպանություն ապահովող իրավասու մարմինների կողմից, Որոշման կայացմանն ուղղված վարչարարության ընթացքում խնդրո առարկան եղել է բացառապես համապատասխան իրավասու մարմնի պարզումը, որպիսին շարադրված իրավանորմերի համաձայն հանդիսանում է Նախարարությունը: Նշված փաստը հերքող կամ վիճարկող որևէ փաստարկ Քաղաքապետարանի կողմից չի ներկայացվել, վերջինս պարզապես պնդել է համարի փոխանցումից բխող, իր դիտարկմամբ, հնարավոր խնդիրների մասին, որոնց գնահատումը, սակայն, Հանձնաժողովի իրավասությունների տիրույթում չէ:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթը պետք է իրականացվի հնարավորինս սեղմ ժամկետում: Վարչական մարմինը պետք է վարչական վարույթն իրականացնի առանց դա բարդացնելու՝ լրացուցիչ լուծումներ անցկացնելու, լրացուցիչ փորձաքննություն նշանակելու կամ զննում կատարելու, եթե առկա չեն գործի փաստական հանգամանքների պարզաբանման համար անհրաժեշտ պատճառներ: Եթե վարչական վարույթ հարուցելուց հետո վարչական մարմնի տրամադրության տակ առկա են համապատասխան վարչական ակտ ընդունելու համար անհրաժեշտ փաստաթղթերը, բավարար չափով պարզաբանված և ճշգրտված են տվյալ գործի հանգամանքները, ապա վարչական մարմինը պարտավոր է վարչական ակտ ընդունել նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո՝ ողջամիտ ժամկետում, ինչն էլ ապահովվել է Հանձնաժողովի կողմից:

Նշվածի համատեքստում անհասկանալի է, թե ինչպիսի ապացույցների մասին է նշում Քաղաքապետարանը, որոնք իբրև Ընկերության տիրապետման տակ են և չեն ստացվել: Եթե անգամ ընդունենք դրանց առկայության հանգամանքը, ապա հարկ է փաստել, որ թե՛ Ընկերությունը, թե՛ Քաղաքապետարանը դեռևս 2021 թվականի մարտ ամսից հնարավորություն են ունեցել ներկայացնելու դրանք, հետևաբար տարակուսելի է հարցի մասին տեղեկացված լինելուց շուրջ մեկ և կես ամիս հետո երկրորդ անգամ Քաղաքապետարանի, որպես պետական մարմնի, կողմից հարցի հետաձգման միջնորդության ներկայացումը՝ պնդմամբ, թե «դեռևս հնարավոր չի գտնում քննարկվող հարցի վերաբերյալ վերջնական դիրքորոշում հայտնել և դրա համար անհրաժեշտ է ծանոթանալ Ընկերության ներկայացրած դիրքորոշմանը և ապացույցներին»: Տվյալ պարագայում Քաղաքապետարանի հիշյալ միջնորդության բավարարման պարագայում է, որ Հանձնաժողովի կողմից թույլ կտրվեր օրենքի խախտում, այն է՝ կխախտվեր Օրենքի 36-րդ հոդվածով ամրագրված արագ գործելու պարտականությունը, այն հաշվառմամբ, որ Որոշման կայացման պահին արդեն իսկ բացահայտված և ուսումնասիրված են եղել դրա կայացման համար

անհրաժեշտ՝ վարույթի շրջանակում էական նշանակություն ունեցող բոլոր փաստերն ու ապացույցները,

դ. օրենքով սահմանված Որոշման բեկանման կամ վերանայման հիմքերը բացակայում են, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 57-րդ հոդվածը և Օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Մերժել Քաղաքապետարանի 2021 թվականի մայիսի 4-ին ներկայացրած վարչական բողոքը՝ Հանձնաժողովի 2021 թվականի ապրիլի 28-ի N°140Ա որոշումը թողնելով անփոփոխ և հաստատելով այն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Քաղաքապետարանին օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
----- 2021թ.